

հրադարձությունների բերումով Հայաստանում ձեռավորվել է մի իրավիճակ, երբ ճգնաժամի ավարտն ավելի մտահոգիչ է, քան ժամանակին դրա գալուստը: Եզվածը պարզաբանելու համար նախ պետք է անդրադառնանք այն բանին, թե հատկապես ինչպես են Հայաստանում արտահայտվել ճգնաժամային երեւոյթները, եւ ինչ կարելի է սպասել ճգնաժամի ավարտից հետո: Այս ամենը կդիտարկենք հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման ֆոնին:

Ճգնաժամը եւ Հայաստանը

Հայաստանի տնտեսության մասին խոսելիս միշտ ընդունված է եղել ասել, թե Հայաստանը աղքատ է բնական ռեսուրսներով, ուստի՝ շեշտը պետք է դնի մարդկային կապիտալի եւ մրցունակության վրա:

Բնական ռեսուրսների առկայության կամ բացակայության հարցի մասին խոսելիս միանգամից պետք է նշել, որ բնական ռեսուրսներով հարուստ գրեթե բոլոր երկրները լուրջ խնդիրներ են ունենում մրցունակության եւ մարդկային զարգացման ասպարեզներում: Սա էլ իր հերթին հանգեցնում է ՀՆԱ-ի եւ ռեսուրսներով հարուստ լինելու բացասական կորելյացիային: Այսպես, 1970-ականներին նավթային ցնցման արդյունքում նավթ արդյունահանող երկրների հսկայական եկամուտները ներդրվեցին այդ երկրներում, սակայն, հակառակ բոլոր սպասումներին, ՀՆԱ-ի աճը երբեմն նույնիսկ բացասական միտումներ դրսևորեց (Torvik, 2009): Սա մեծ մասամբ պայմանավորված է այն բանով, որ ապահովության բարձրը, որ տալիս են բնական ռեսուրսները, երկրում վերացնում է հրատապության զգացումը եւ օբյեկտիվ հիմքեր ստեղծում իրական մրցունակության աճի ցածր տեմպերի համար: Հայաստանը, այս առումով, թվում է՝ կարող էր միայն պարծենալ. չկան բնական ռեսուրսներ, կան շնորհալի մարդիկ, եւ խորքային զարգացումն այլընտրանք չունի:

Հայաստանի տնտեսությունը նախաճգնաժամային տարիներին արձանագրում էր տնտեսական երկնիշ աճ, որն ուղեկցվում էր երկրի մրցունակության նվազմամբ: Այս երեւոյթը մասնագետներն անվանեցին «աճ-մրցունակություն պարահոգ» (Ջերգլյան, Հովհաննիսյան եւ Մալումյան, 2009, էջ 6): Երկրայացված աղյուսակում մանրամասն երեւում են Հայաստանի տնտեսական զարգացման մոդելի թերությունները եւ վերջին տարիների տնտեսական աճի տրամաբանությունը: Այն դեպքում, երբ մենք 2006-07թթ. արձանագրում էինք տնտեսական երկնիշ աճ, երկրի մրցունակությունը շարունակ նվազում էր, արտահանումն էլ, մի քանի անգամ զիջելով ներմուծմանը, կենտրոնացած էր բնական ռեսուրսների վրա (որոնցով, ինչպես նշեցինք, Հայաստանը առանձնապես հարուստ է):

Ինչպես պարզ է դառնում, Հայաստանի տնտեսական աճի ֆինանսավորման կարելու աղբյուրներից մեկը մասնավոր տրանսֆերտներն էին, իսկ արտահանման գլխավոր ուղղությունը՝ բնական ռեսուրսները: Այստեղից էլ ճգնաժամի՝ Հա-

յաստանի վրա ազդելու հիմնական աղբյուրները.

✓ տրանսֆերտների նվազում՝ կապված այլ երկրներում մեր հայրենակիցների եկամտի նվազման հետ,

✓ արտահանման կրճատում՝ կապված բնական ռեսուրսների գների նվազման հետ:

Վերոնշյալին կարելի է հավելել նաեւ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների կրճատումը եւ ինստիտուցիոնալ այն համակարգը, որն ի վիճակի չէր դիմագրավել վերահաս վտանգը (Սիվիլիթասս հիմնադրամ, 2009, էջ 50, 51): Մասնավոր տրանսֆերտների հետ կապված՝ հատկանշական է, որ դրանք տնտեսության վրա ավելի բացասական ազդեցություն են ունենում, քան բնական ռեսուրսների արտահանումը: Եթե բնական ռեսուրսների արտահանումից ստացվող եկամուտները հարկերի ձեռով կարող են հավաքագրվել եւ ուղղվել կապիտալ ծախսերին, ապա մասնավոր տրանսֆերտները լոկ սպառողական ծախսեր են:

Ճգնաժամի նահանջը եւ ռիսկերը

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը վաղ թե ուշ պետք է ավարտվի: ՀՀ կառավարությունը 2010թ. համար Հայաստանում կանխատեսում է 1.2% տնտեսական աճ (Սիվիլիթասս հիմնադրամ, 2009, էջ 51), իսկ IHS-ի կանխատեսմամբ՝ Հայաստանի տնտեսական աճը 2010-13թթ. կազմելու է 3.4-3.9% (IHS GLOBAL Insight Inc., 2009, p. 4), սակայն իրավիճակը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ծանր լինել, եւ այս հարցում մասնագետների լավատեսությունը խիստ զգուշավոր է (Ralph, 2009; McKinsey Quarterly, 2009): Դժվար կլինի հատկապես զարգացող երկրների համար, ինչը կապված է պահանջարկի, պետական եկամուտների եւ ֆինանսական շուկաներում կայունության ցածր մակարդակի հետ (Gligorov, 2009, p. 19):

Տնտեսական ճգնաժամի աստիճանական նահանջը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի մասնավոր տրանսֆերտների ներհոսքի ավելացման, ինչպես նաեւ բնական ռեսուրսների գների բարձրացման հետեւանքով արտահանման ծավալների մեծացման: Սա էլ իր հերթին կթուլացնի լուրջ բարեփոխումների գնալու խթանները: Այլ կերպ ասած՝ եթե ոչինչ չարվի, մենք նորից կվերադառնանք այն կետին, որտեղից սկսել ենք եւ որակական փոփոխություններ չենք ունենա:

Ինչպես արդարացիորեն նշում է Ջերգլյանը, «ճգնաժամը ռադիկալ ռեֆորմների համար լավագույն ժամանակն է, քանի որ խնդիրներն ակնհայտ երեւում են, եւ փոփոխություններ անելու մոտիվացիա կա... Կարծում եմ՝ մի հիմնարար խնդիր կա, որի չլուծման պայմաններում, տնտեսական քաղաքականությունը միշտ լինելու է արձագանքող ու խարխափող, այն է՝ զարգացման տնտեսական մոդելի անհասկանալի լինելը: Այսինքն՝ ինչ մոդելով ենք կարողանալու ապահովել մրցունակություն: Եթե այդ մոդելը պետք է կառուցվի այն ելքաղբյուրով, որ պետք է ունենանք լավ տրանսպորտային կոմունիկա-

ՃԳՆԱԺԱՄԻ ԱՎԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԴԱՌԱՅ

Ատենախոսության թեմա՝
Մրցունակ բիզնեսի
հիմնական գծերը եւ
զարգացման հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում
Գիտական ղեկավար՝
Գրիշա ՂԱՐԻՔՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Աշոտ
ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
ԵՊՀ
տնտեսագիտության
տեսության
ամբիոնի
ասպիրանտ



Հայաստանի տնտեսության ճգնաժամը մի քանի ցուցանիշով

Ցուցանիշ	2006	2007	2008	2009
ՉՆԱ աճը (%)	13.20	13.70	6.80	-14.40
Մասնավոր տրանսֆերտները % ՉՆԱ -ից	11.7	11.5	11.7	10.7
Մասնավոր տրանսֆերտների աճը (%)	33.7	40.6	31.6	-33.3
Ներմուծում եւ արտահանում հարաբերակցությունը	2.19	2.84	3.84	4.74
Բացասական առեւտրային հաշվեկշիռի ֆինանսավորումը մասնավոր տրանսֆերտներով (%)	63.2	50.0	42.6	35.7
Բնական ռեսուրսների արտահանումը ընդհանուր արտահանման կառուցվածքում	38.6	43.6	40.9	42.1
ՄՀԶ ցուցիչ (արժեքի փոփոխություն, %)		-2.6	-1.8	-0.5

Աղբյուրներ՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԿԲ, Հեղբայր, Հովհաննիսյան եւ Մալումյան, 2009, IHS GLOBAL Insight Inc., 2009, UN Comtrade
 * ՄԱԿ-ի ապրանքային դասակարգիչով՝ 25, 26, 72, 74, 81 դասեր

ցիաներ, բաց սահմաններ, եւ դրան այլընտրանք չկա, ապա ևս որից մեզ դնելու ենք շատ խոցելի դրության մեջ, քանի որ այդ կոմունիկացիաների վերահսկման հնարավորություն չունենք: Մեր մոդելը պետք է ելիկ նրանից, որ ունենք աշխարհի հետ հարողակցման համար վատ կոմունիկացիաներ: Իհարկե, բարդ է այս պայմանների համար գարգացում ապահովող տնտեսական մոդել գտնել, բայց անհնար չէ» (Հեղբայր, 2009):

Այսօր Հայաստանն արդարեւ կանգնած է կարելու մարտահրավերի առջև, այն է՝ իր զարգացման տեսլականի որոշումը եւ դրան հասնելու ռազմավարության մշակումը: Ծգնաժամը, ընդգծելով տնտեսության բոլոր թույլ կողմերը, լավ հնարավորություն է ստեղծում այդ խնդիրների լուծման համար, նախ՝ որովհետեւ փոփոխությունների անհրաժեշտությունը ակնհայտ է, ինչպես նաեւ դրանք առավել քան երբեք ընկալելի են հասարակության համար: Ուստի՝ օր առաջ կառավարությունը պետք է սկսի հարցերին մոտենալու ռամավարորեն:

Այս համատեքստում հատուկ ուշադրություն դարձնենք ճգնաժամի նահանջի հետ կապված՝ հայկական ձեռնարկությունների անելիքներին:

Ծգնաժամն այն «ճշմարտության պահն» է, երբ բացահայտվում է բիզնեսի իրական մրցունակությունը, արտաքին միջավայրի ազդակները կազմակերպակախորեն ընկալելու ունակությունը եւ կուտակած զարգացման ներուժը: Ծգնաժամը նաեւ լավագույն հնարավորությունն է ստեղծում երկրորդ կարգի ուսուցման առջև եղած խոչընդոտների հաղթահարման համար: Պատահական չէ, որ խոշոր տարբեր ձեռնարկությունների ղեկավարների հարցազրույցներում կարմիր թելով անցնում է երկրորդ կարգի ետադարձ կապի վատ աշխատանքը տնտեսական ճգնաժամի հիմքում տեսնելը (Webb, 2009):

Հայկական ձեռնարկությունները եւս պետք է լուրջ հետետևություններ անեն ճգնաժամից: Հատկապես անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետերկալ հիմնարար քայլերը:

● **Վերանայել բիզնեսի նպատակահարմարությունը, վերամտածել առաքելությունը, ձեռնկերպել ճիշտ տեսլական:** Կարելու հարցերի է պետք անդրադառնալ: Արդյոք երկարաժամկետ հատվածում ճիշտ է բիզնեսի այդ տեսակով զբաղվելը: Ինչպիսի՞ն պետք է լինի բիզնեսը հեռանկարում: Ո՞րն է դրա առաքելությունը:

● **Վերանայել կորպորատիվ մշակույթը եւ կազմակերպական կառուցվածքը:** Ինչպիսի՞ն են ձեռնարկության կորպորատիվ մշակույթն ու կորպորատիվ կառուցվածքը: Արդյոք դրանք հնարավորություն տալի՞ն են միջազգային շուկայում նորամուծություններ ապահովել, մրցունակ դիրք գրավել եւ այն պահել: Ներքին ի՞նչ հակազդեցություններ կան ճիշտ մշակույթ եւ կառուցվածք ձեռավորելու առումով, ինչպե՞ս դրանք հարթահարել: Հիշենք առաջնորդության կարելությունը:

● **Վերանայել ձեռնարկության անձնակազմը:** Ովքե՞ր են այն մարդիկ, որ պիտի տանեն ձեռնարկությունը դեպի տեսլականի իրագործում: Արդյոք այդ մարդիկ կարո՞ղ են դա անել: Իրենց մտավոր եւ աշխարհայացքային ներուժով կարո՞ղ են

արդյոք նրանք իրենց տեսնել նոր իրավիճակում:

● **Վերանայել օպերացիոն արդյունավետությունը:** Արդյոք ձեռնարկության բիզնես պրոցեսները արդյունավետ են: Ինչպե՞ս կարելի է ստանալ նույն կամ ավելի լավ արդյունք՝ ժամանակային եւ ֆինանսական ավելի փոքր ծախսերով: Սա ենթադրում է արժեքի ստեղծման ճարտարապետության վերանայում (մատակարարման ցանց, ՏՏ-ը որպես ինքնարժեքի կրճատման գործիքի կիրառում):

● **Իրականացնել ֆինանսական բացվող հնարավորությունների ճիշտ կիրառում:** Ծգնաժամի նահանջն ամենայն հավանականությամբ կմեծացնի ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, ինչը ենթադրում է, որ պետք է կարողանալ ճիշտ ժամանակին ներդրումային ճիշտ քայլեր կատարել:

Հայ-թուրքական սահմանի բացումը. մարտահրավերներ եւ հնարավորություններ

Այսօր հայ-թուրքական փակ սահմանի երկու կողմերում գործող գործարար համայնքները մեծապես շահագրգիռ են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ: Հայաստանում 2010թ. ամենաշատ քննարկված թեմաներից մեկն էլ թերեւս հենց այդ կարգավորումն է: Մենք գերծ կմտանք այս գործընթացին առնչվող քաղաքական բազմաթիվ խնդիրների քննարկումից եւ կփորձենք ցույց տալ, թե ինչ կարող է նշանակել հայ-թուրքական սահմանի բացումը հայկական բիզնեսի համար, որոնք են դրա հետ կապված ռիսկերն ու հնարավոր մարտահրավերները:

Նախ փորձենք ցույց տալ, թե ինչ հետեւանքներ կարող են ակնկալվել հայ-թուրքական սահմանի բացման արդյունքում: Ստորեւ փորձենք ամփոփ ներկայացնել խնդրի շուրջ եվրոպա-խորհրդարանի եւ Տնտեսական քաղաքականության ու իրավական խորհրդատվության եվրոպական կենտրոնի հետազոտությունների արդյունքները (Tocci, Gultekin-Punsmann, Simao, & Tavitian, 2007; Տնտեսական քաղաքականության եւ իրավական խորհրդատվության եվրոպական կենտրոն (AEPLAC), 2005):

● **Արտահանման շուկաների ընդլայնում:** Այսօր Հայաստանի արտահանման շուկաները շատ հեռու են անմիջական սահմաններից (Հայաստանի հիմնական շուկաներն են հեռավոր եվրամիությունը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իսրայելը), իսկ սահմանների վերաբացման պարագայում Հայաստանն իր առջեւ կունենա 100 միլիարդ ԱՄՆ դոլար (գնողունակության պարիտետով ճշգրտված) տարողությամբ շուրջ 50 միլիոնանոց սպառողական շուկա:

● **Տրանսպորտային ծախսերի եւ բեռնափոխադրման հեռավորությունների շեշտակի կրճատում:** Այսպես, Երեւանից Իզմիր հեռավորությունը կկրճատվի 10 անգամ, շուրջ 14 անգամ կկրճատվի Գյումրիից Կարս հասնելու համար անհրաժեշտ ճանապարհը: Նման հեռավորությունները տնտեսապես անիմաստ են դարձնում ծանրակշիռ ապրանքների առետուրը: Բացի այդ, Հայաստանի առջեւ բացվում են միջերկրածովյան նավահանգիստները, որոնք առաջարկում են բեռնափոխադրման շատ ավելի մատչելի տարբերակներ: Կատարված հաշվարկները կանխատեսում են բեռնափոխադրման ծախսերի 20-25% կրճատում:

● **Վրաստանի՝ Հայաստանի բեռների տարանցման համար գրեթե մենաշնորհային վիճակի վերացում:** Հայկական բեռների տարանցման 90%-ը կատարվում է Վրաստանի տարածքով, իսկ Վրաստանը, օգտվելով իր մենաշնորհային դիրքից, սահմանում է խստ բարձր գանձումներ: Միավոր բեռի Երեւանից Փոթի տեղափոխելն արժե այնքան, որքան Նյու Յորքից Սիեթլ:

● **Հայաստանի տարածքով միջազգային բեռնափոխադրումների իրականացում:** Հնարավորություն կընձեռնվի Թուրքիա-Հայաստան-Ռուսաստան եւ Կենտրոնական Ասիա-Հայաստան-Թուրքիա բեռնափոխադրումների հոսքի ապահովման համար:

● **Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճ:** Հաշվարկները ցույց են տալիս տարածաշրջանում բախումների հավանա-

կանության 30%-ով նվազելու դեպքում Հայաստանի տնտեսության մեջ ներդրումները կաճեն 50%-ով, ինչը կհանգեցնի ՀՆԱ 3-4% աճի:

Այս ամենի արդյունքում, մասնագետների կարծիքով, Հայաստանի ընդհանուր արտահանումը կավելանա 4-17.7%-ով, ներմուծումը՝ 3-15.6%-ով (հիշենք, որ ներմուծումը 2.7 անգամ գերազանցում է արտահանումը), իսկ ՀՆԱ-ն՝ 2-7.3%-ով (Roberts, p. 9):

Սրանք լուրջ հնարավորություններ են, որ բացվում են հայկական բիզնես դաշտի առջեւ, սակայն կան նաեւ լուրջ մարտահրավերներ, որոնք հատկապես կանգնելու են գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության եւ սպառողական ապրանքների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների առջեւ (Սարգսյան, 2007): Հայաստանը գործ է ունենալու շատ ավելի մրցունակ եւ մասշտաբի էֆեկտի հաշվին շատ ավելի ցածր ինքնարժեքով արտադրանքների ներհույսի հետ: Բիզնես դաշտի ոչ համարժեք պատասխանի արդյունքում կարող ենք նորից ապավինել մասնավոր տրանսֆերտներին եւ, դրանց հաշվին ներմուծելով թուրքական էժան ապրանքները, շարունակել գոյատևումը: Բայցեւ՝ հայկական բիզնեսը կարող է կատարել այն քայլերը, որոնց մասին խոսեցինք նախորդ բաժնում, եւ գտնել իր արժանի տեղը տնտեսական նոր համատեքստում:

Сущность финансово-экономических кризисов, вроде происходящего ныне, состоит в том, что во время кризиса выявляются и ликвидируются ошибки в инвестиционных решениях экономических субъектов, финансовые и экономические диспропорции, накопившиеся за предыдущий период бума. Экономика выходит из кризиса и переходит к уверенному росту только после того, как предшествующие ошибочные проекты и диспропорции ликвидированы, а ресурсы перенаправлены в те сферы, где их применение наиболее эффективно обслуживает нужды потребителей. В этом смысле кризис является объективно неизбежным и необходимым процессом экономической коррекции, выполняющим полезную экономическую функцию.

Нынешний мировой кризис стал следствием беспрецедентного в человеческой истории кредитного бума, спровоцированного политикой правительств и центральных банков индустриальных стран мира и породившего диспропорции невиданного масштаба.

Зарубежные специалисты, анализируя ситуацию в мировой экономике, разрабатывают различные сценарии развития событий. Одна часть специалистов утверждает, что восстановление мировой экономики в ряде стран началось во втором полугодии 2009 года. Пессимисты утверждают, что мировая экономика и финансы, долгие годы не будут демонстрировать предыдущие темпы роста. Часть аналитиков считают, что восстановление экономики развитых стран начнется не ранее 2 квартала 2010 года¹.

Специалисты и аналитики выделяют ряд признаков, свидетельствующих об окончании кризиса и о начале нового периода экономического роста. На наш взгляд основные признаки свидетельствующие о восстановлении экономики следующие:

Во-первых, *стабильность и предсказуемость рынков*. До начала подъема в экономике многие компании заморозили свою активность, другие, напротив, начали осваивать новые сегменты рынка, пользуясь растерянностью конкурентов. Тем не менее, вне зависимости от вида бизнеса или выбранной линии поведения, практически все бизнес-структуры нуждаются в стабильности и предсказуемости рынков. Тем самым, о начале выхода из кризиса и стабилизации ситуации может свидетельствовать стабильность фондовых индексов, например S&P 500, Dow Jones Industrial Average, Nasdaq Composite, которые выступают барометром американской экономики.

В настоящее время наблюдается резкий рост основных фондовых индексов. К концу первого квартала 2010 года значение Dow Jones Industrial Average достигло максимального уровня за 18 месяцев, составив 10895,86 пункта, что является максимумом с 26 сентября 2008 года, Standard & Poor's 500 остановился на уровне 1173,22 пункта, значение индекса Nasdaq Composite увеличилось до 2404,36 пункта. Повышение Dow Jones с начала 2010 года составляет почти 4,5%, индекс S&P 500 прибавил в этом году 5,2% и Nasdaq - около 6%². На мой взгляд, S&P 500³ *более достоверно отражает рынок*, так как он гораздо более диверсифицирован и рассчитывается исходя из капитализации, а не только цены. В сравнении с индексом Доу Джонса, в который входят лишь голубые фишки (крупные, "элитные" компании) некоторых отраслей экономики, индекс S&P 500 включает в себя компании, которые представляют все отрасли экономики и не являются голубыми фишками, являются наиболее востребованными компаниями, которые наиболее объективно представляют отрасль и рынок в целом. Данный индекс является совокупным показателем изменения цен группы

Օգտագործված գրականություն

1. Gligorov V. (2009, December), *Growth is Disappearing and May Not Recover in the Medium Run*, Development Outreach, 19-24.
2. IHS GLOBAL Insight Inc. (2009, November), *IHS Global Insight Report: Armenia (Country Intelligence)*, Armenia Country Monitor, 1-16.
3. McKinsey Quarterly (2009, December), *Economic Conditions Snapshot*, McKinsey Global Survey results, McKinsey Quarterly.
4. Ralph J. (2009, December 29), *Financial Crisis Was Too Short to Teach Us Lessons* (D. Henry, & J. Greiff, Eds.), Business Week.
5. <http://www.businessweek.com/news/2009-12-29/financial-crisis-was-too-short-to-teach-us-lessons-jay-ralph.html> (last access: January 8, 2010).
6. Roberts B., *The Economic and Social Impacts of Opening the Armenia-Turkish Border: Summary of Conference Research Findings*, Armenian Policy Research Group.
7. Tocci N., Gultekin-Punsmann B., Simao L., & Tavitian N. (2007), *The Closed Armenia-Turkey Border: Economic and Social Effects, Including Those on the People; and Implications for the Overall Situation in the Region*, Policy Department External Policies, Brussels: European Parliament.
8. Torvik R. (2009), *Why do some resource-abundant countries succeed while others do not?* Oxford Review of Economic Policy, 25 (2), 241-256.
9. Webb A.P. (2009, June), *Management lessons from the financial crisis: A conversation with Lowell Bryan and Richard Rumelt*, The McKinsey Quarterly.
10. Հերզոլյան Մ. (19 դեկտեմբերի, 2009), *Արդեն ուշացել ենք* (Հ. Սանուկյան, զրուցող), 168 ժամ, <http://168.am/am/articles/21084>
11. Հերզոլյան Մ., Հովհաննիսյան Ս., Մալուկյան . (2009), *Հայաստանի ազգային մրցունակության գեկույց 2009*, Լորարարության էլեկտրոնային տեղեկատվական կենտրոնի հետազոտական կենտրոն
12. Սարգսյան Ս. (2007), *Հայաստան-Թուրքիա առևտրային հոսքերը*, Կ. Հայրությունյան, Յու. Սուվարյան, Ա. Մարկոսյան, Ս. Ղազարյան.
13. Բոստանջյան, Թ. Թորոյան եւ այլք. (խմբ.), *Սոցիալ-տնտեսական գաղափարների հիմնախնդիրները ՀՀ-ում*, Փրոտոկոլովի կյուբեր (Էջ 467-469), Երեւան
13. Սիվիլիթաս հիմնադրամ (2009), *Հայաստան 2009*. Խոստում եւ իրականություն, Երեւան
14. *Տնտեսական քաղաքականություն* եւ իրավական խորհրատվության եվրոպական կենտրոն (AEPLAC) (2005), *Հայ-թուրքական սահմանի վերաբացման տնտեսական հետեւանքները Հայաստանի համար*. Ենթադրույուններ արտաքին առևտրի վերաբերյալ, Երեւան